Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 1. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «առնվազն 50» բառերը փոխարինել «առնվազն 25» բառերով,

2) 5-րդ մասում «երեք» բառը փոխարինել «տասն» բառով,

3) 5-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե տասնօրյա ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում չի կայացնում, նախաձեռնող խումբը համարվում է գրանցված:»:

~~4) 15-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով.~~

~~« 5) Օրենքով չարգելված այլ վայրերում:»:~~

~~5) 16-րդ մասում հանել «՝ համապատասխան հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ» բառերը:~~

4) 19-րդ մասում «45 օրվա»եւ «90 օրվա» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «~~90~~ 60 օրվա» եւ «180 օրվա» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Թերությունների հայտնաբերման դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անհապաղ տեղեկացնում է քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցչին եւ տրամադրում 10 աշխատանքային օր՝ հայտնաբերված թերությունները վերացնելու համար:»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: